



<<Ջուր և առողջություն>>

Արձանագրության շրջանակում
ազգային թիրախների նախնական
արդյունքները

*Տիգրան Օզանեզով
Փորձագետ*

Երևան, 06 մայիսի, 2014

Ելակետային իրավիճակի վերլուծություն

Նախնական վերլուծությունը ներառում է հետևյալ տեղեկատվությունը.

- Ռազմավարություններ, իրավական / կարգավորիչ դաշտ և միջազգային պարտավորություններ
- Ինստիտուցիոնալ շրջանակներ
- Տինանսական շրջանակներ
- Ոլորտին վերաբերող հիմնական խնդիրներ

IX-Չմաքրված կեղտաջրերի արտահոսքի դեպքեր

- Վթարային վիճակում են գտնվում շուրջ 40 տարի առաջ կառուցված ցանցերի և կոլեկտորների ավելի քան 60%:
- Ցանցի մեկ կիլոմետր երկարության վրա տարեկան բաժին է ընկնում 2.5 վթար:
- Հանրապետությունում առաջացած կեղտաջրերի ընդհանուր ծավալի միայն մի մասն է ենթարկվում նորմալ (մասնակի) մեխանիկական մաքրման:

Առաջարկվող թիրախներ

- Ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունն մատուցող կազմակերպությունների աշխատանքների գնահատման չափորոշիչներում կեղտաջրերի մաքրման ցուցանիշների ներառում (2016թ.)
- Կեղտաջրերի արտահոսքի կրճատում Երևան քաղաքում առնվազն 50% (2016թ.), մինչև 90% (2020թ.)
- Առնվազն 2 քաղաքում կեղտաջրերի մաքրման կայանների կառուցում (2016թ.)
- Առնվազն 2 քաղաքում առկա կոյուղու ներքին ցանցի վերանորոգում (2016թ.)

XVIII - Հատկապես աղտոտված տարածքների հայտնաբերում և դրույթյան շտկում/մաքրում

- Լեռնահանքարդյունաբերության գործունեության հետևանքով մակերևութային ջրերը աղտոտվում են:
- Սևանա լիճ թափվող գետերում ծանր մետաղների և աղտոտող նյութերի մեծ խտություններ են առկա:
- Գետային նստվածքներում ծանր մետաղների վերաբերյալ հետազոտությունները բացակայում են:

Առաջարկվող թիրախներ

- Իրականացնել գնահատում ըստ բաց ջրավազան արտանետվող կեղտաջրերի ԹՄԱ չափանիշների (մինչև 2018թ. պիլոտային ծրագրի իրականացում առնվազն մեկ ջրավազանի համար, մինչև 2020թ.՝ 2 ջրավազանի համար):
- Ջրերի որակի կառավարման ռազմավարության մոնիթորինգ և հետագա բարելավում (2021թ.):

Առաջարկվող թիրախներ

- Մոնիտորինգային կետերի օպտիմիզիցիա:
- Ջրի որակի մոնիտորինգի և գնահատման նոր համակարգի ներդրում 2017:
- Ջրի քանակի և որակի դիտակետերի համապատասխանեցում:

XIX - Ջրային ռեսուրսների կառավարման, զարգացման, պահպանման և օգտագործման համակարգերի արդյունավետությունը

- Գետավազանային կառավարման նոր պլանների մշակման, հների լրամշակման և դրանց իրականացման համար Ջրավազանային կառավարման մարմինների ունակությունների հմտությունների, ինչպես նաև մարդկային տեխնիկական և ֆինանսական ռեսուրսների բացակայություն:
- Առկա են տվյալների և տեղեկատվության բացեր:

XIX - Ջրային ռեսուրսների կառավարման, զարգացման, պահպանման և օգտագործման համակարգերի արդյունավետությունը

- Ջրային ռեսուրսների կառավարման ոլորտում համապարփակ որոշումներ կայացնելու համար ջրի որակի գնահատման համակարգի անկատարություն:

Առաջարկվող թիրախներ

Օրենսդրական միջոցառումներ

- Ջրային ոլորտի գերատեսչությունների դերերի և պատասխանատվությունների հստակեցում (2015-2017թթ.)
- ՋՊԿ տվյալների բազայի հզորացման նպատակով շահագրգիռ հաստատությունների միջև տեղեկատվության փոխանակման գործընթացի օրենսդրական հիմնավորում և մեխանիզմների ստեղծում (2015-2017թթ.)
- Ջրավազանային կառավարման պլանների մշակում Արփա, Որոտան, Ախուրյան, Մեծամոր, Ողջի և Մեղրիգետ գետերի համար (2015-2017թթ.)

Առաջարկվող թիրախներ

Օրենսդրական միջոցառումներ

- Ջրավազանային կառավարման խորհուրդների գործունեության և իրավասությունների օրենսդրական հիմքի ստեղծում (2018-2020թթ.)
- Ջրային մարմինների դասակարգման օրենսդրական հիմքի ստեղծում (2015-2017թթ.)
- Կենսամոնիտորինգի կիրառման ուղեցույցի մշակում` ՀՀ իրականացված/իրականացվող պիլոտային ծրագրերի արդյունքների հիման վրա (2018-2020թթ.)
- Թիրախային խնդիրների կարգավորման նպատակով համապատասխան իրավական ակտերի մշակում (2015-2020թթ.)

Առաջարկվող թիրախներ

Ինստիտուցիոնալ միջոցառումներ

- ՀՀ ջրի ազգային ծրագրի իրականացման ինստիտուցիոնալ հիմքի հզորացում և զարգացում (2015-2017թթ.)
- Արդեն ստեղծված և գործող ջրավազանային տարածքային կառավարման բաժինների հզորացում (2015-2017թթ.)
- Ջրավազանային տարածքային կառավարման բաժիններին կից ջրավազանային կառավարման խորհուրդների ստեղծում (2018-2020)

Առաջարկվող թիրախներ

Գործնական (պրակտիկ) միջոցառումներ

- ՋՊԿ համակարգի հզորացում (2015-2017թթ.)
- Ջրային ռեսուրսների ըստ ջրային մարմինների դասակարգում (2015-2020թթ.)
- Ջրաէկոհամակարգերի բարելավման միջոցառումների պլանի մշակում` ըստ ջրային մարմինների (2015-2020թթ.):

Առաջարկվող թիրախներ

Գործնական (պրակտիկ) միջոցառումներ

- ՀՀ ստորերկրյա ջրային ռեսուրսների հիդրոերկրաբանական ուսումնասիրությունների կատարում և այդ ռեսուրսների գնահատում (2015-2017թթ.)
- Ջրավազանային տարածքային կառավարման բաժինների ջրային ռեսուրսների կառավարման բնագավառում որոշումների կայացմանն աջակցող համակարգի ներդրում (2018-2020թթ.)

XX- Մատակարարվող խմելու ջրի և այլ ջրերի որակի վերաբերյալ տեղեկատվության հրապարակման հաճախականությունը

- Մատակարարվող խմելու ջրի և այլ ջրերի որակի վերաբերյալ տեղեկատվությունը քիչ հասանելի է կամ բացակայում է:
- Հրապարակվում են հիմնականում տարեկան, և/կամ եռամսյակային և/կամ ամսեկան հաշվետվություններ
- 560 համայնքների խմելու ջրի վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի չէ:
- Մանկական հիմնարկներում խմելու ջրի վերաբերյալ տեղեկատվությունը բացակայում է:

Առաջարկվող թիրախներ

➤ <<Ջուր և առողջություն>>

Արձանագրության համապատասխան ազգային հաշվետվության հրատարակում (3 տարին մեկ անգամ սկսած 2016թ-ից):

➤ <<Ջուր և առողջություն>>

Արձանագրության ոլորտների վերաբերյալ տեղեկատվական կենտրոնի ստեղծում (2015թ.):



Շնորհակալություն